ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան 5 նոյեմբերի 2026 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Վարդանյանի

Անդամակցությամբ՝ Ա. Վաղարշյանի

Հ. Հովակիմյանի

Քննության առնելով «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ (այսուհետ նաև՝ Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Լարիսա Բաղդասարյան) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2026 թվականի հոկտեմբերի 20-ին, որով Դիմողը խնդրել է.

«(...)

(...) Որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ այն մասով, որ մասով թիվ ԼԴ1/1298/02/16 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 09.04.2025 թվականի (23.04.2025թ. հրապարակված) վճռով ***դատավարության կողմերի միջև կնքված և միմյանց նկատմամբ պարտավորության չափի որոշման համար փորձաքննություն նշանակելու պայման ունեցող պայմանագրով կարգավորվող պարտավորությանն առնչվող դատական վեճի հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբը չի հաշվարկվել փորձաքննության եզրակացության ստացման պահից****, ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, և 75-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:*

(...) Որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 614-րդ հոդվածի 3-րդ մասին և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 626-րդ հոդվածի 2-րդ մասին տրված մեկնաբանության՝ այն մասով, որ մասով թիվ ԼԴ1/1298/02/16 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 09.04.2025 թվականի (23.04.2025թ. հրապարակված) ***վճռով դատավարության կողմերի միջև կնքված և միմյանց նկատմամբ պարտավորության չափի որոշման համար փորձաքննություն նշանակելու պայման ունեցող պայմանագրով կարգավորվող պարտավորությանն առնչվող դատական վեճի քննությամբ վարձակալության պայմանագրի վարձավճարից չի նվազեցվել վարձակալի կողմից կատարված բարելավումների արժեքը այն ուղղակիորեն պայմանագրով նախատեսված լինելու պայմաններում****, ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 75-րդ հոդվածների համապատասխանության հարցը»:*

2. Ներկայացնելով թիվ ԼԴ1/1298/02/16 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը Սահմանադրական դատարանի առջև բարձրացնում է հետևյալ իրավական հարցադրումները. «(...) արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը՝ համաձայն որի **դատավարության**

կողմերի միջև կնքված և միմյանց նկատմամբ պարտավորության չափի որոշման համար փորձաքննություն նշանակելու պայման ունեցող պայմանագրով կարգավորվող պարտավորությանն առնչվող դատական վեճի հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբը չի հաշվարկվում փորձաքննության եզրակացության ստացման պահից, համաչափ է և համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 75-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության, դատական պաշտպանության և հիմնական իրավունքների իրականացման համար արդյունավետ կառուցակարգեր ունենալու հիմնարար իրավունքներին այնքանով, որքանով զրկում է անձին դատական պաշտպանության հնարավորությունից,

(...) արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 614-րդ հոդվածի 3-րդ մասին և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 626-րդ հոդվածի 2-րդ մասին տրված մեկնաբանությունը՝ համաձայն որի **դատավարության կողմերի միջև կնքված և միմյանց նկատմամբ պարտավորության չափի որոշման համար փորձաքննություն նշանակելու պայման ունեցող պայմանագրով կարգավորվող պարտավորությանն առնչվող դատական վեճի քննությամբ վարձակալության պայմանագրի վարձավճարից չի նվազեցվել վարձակալի կողմից կատարված բարելավումների արժեքը այն ուղղակիորեն պայմանագրով նախատեսված լինելու պայմաններում,** համաչափ է և համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 75-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության, դատական պաշտպանության և հիմնական իրավունքների իրականացման համար արդյունավետ կառուցակարգեր ունենալու հիմնարար իրավունքներին»:

Դիմողը նշում է, որ քաղաքացիական իրավահարաբերությունների դիսպոզիտիվությունը իրավահարաբերության սուբյեկտներին թույլ է տալիս պայմանագրով սահմանել այնպիսի պայմաններ, որոնք ձեռնտու են իրենց ձեռնարկատիրական գործունեությունը կազմակերպելու համար, հետևաբար՝ այն պարագայում, երբ կողմերը պայմանագրով նախատեսել են պարտավորության չափի գնահատման վերաբերյալ փորձագիտական եղանակ, ապա պարտավորության

չափի վերաբերյալ այլ տեղեկությունների իմացությունը չի կարող դիտվել որպես հայցային վաղեմության ժամկետի սկիզբ:

Դիմողն այս առումով գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, համաձայն որի՝ դատավարության կողմերի միջև կնքված և միմյանց նկատմամբ պարտավորության չափի որոշման համար փորձաքննություն նշանակելու պայման ունեցող պայմանագրով կարգավորվող պարտավորությանն առնչվող դատական վեճի հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբը չի հաշվարկվում փորձաքննության եզրակացության ստացման պահից, համաչափ չէ և չի համապատասխանում Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով նախատեսված՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքներին, ինչպես նաև Սահմանադրության 75-րդ հոդվածին:

Դիմողը նաև նշում է, որ իր կողմից կատարվել է յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի և (կամ) մեքենա-մեխանիզմի այս կամ այն ֆունկցիոնալ մասի և (կամ) համակարգի վերանորոգում, ինչպես նաև այս կամ այն պահեստամասի կամ պահեստամասերի փոխարինում՝ վերջիններիս աշխատանքային վիճակն ապահովելու համար, որպիսի պարագայում միայն դրանք կարող էին օգտագործվել իրենց նպատակային նշանակությանը համապատասխան: Ըստ այդմ՝ Դիմողի պնդմամբ՝ ակնհայտ է դառնում, որ իր կողմից ներկայացված՝ գումարի բռնագանձման պահանջի հիմքում դրված՝ իր վարձակալած գույքի բարելավումներն անհնար է առանձնացնել այդ գույքից, այլ կերպ ասած՝ այդ բարելավումներն իրենց բնույթով անբաժանելի են:

Քննարկվող համատեքստում Դիմողն ընդգծում է, որ խնդրո առարկա քաղաքացիական գործով պատասխանողը ոչ միայն տեղյակ է եղել սեփականության իրավունքով վերջինիս պատկանող և վարձակալության հանձնված գույքի անբաժանելի բարելավումների՝ վերանորոգման աշխատանքների կատարման մասին, այլ նաև համաձայն է եղել այդպիսի բարելավումների կատարմանը՝ նշվածը հստակ արձանագրելով պայմանագրում: Ավելին, ըստ Դիմողի՝ վարձակալված գույքի բարելավումները վարձատուի համաձայնությամբ կատարված լինելու փաստը

հիմնավորվում է նաև կողմերի միջև հաստատված մի շարք հանձնման-ընդունման ակտերով, որոնցով ինքը հանձնել, իսկ պատասխանողն ընդունել է արդեն սարքին վիճակում գտնվող տրանսպորտային միջոցներն ու մեքենա-մեխանիզմները՝ հաստատելով դրանց նորմալ աշխատանքային վիճակը: Հետևաբար՝ Դիմողը գտնում է, որ իր մոտ առաջացել է այդ բարելավումների արժեքի չափով հատուցում պահանջելու օրինաչափ իրավունք կամ վարձավճարից նվազեցում պահանջելու իրավունք: Դիմողի պնդմամբ՝ նման պայմաններում իր սկզբնական հայցը ենթակա էր բավարարման, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժման, քանի որ իր կողմից իրականացված բարելավումների արժեքն էականորեն գերազանցել է հակընդդեմ հայցվորի կողմից հայցվող՝ ենթադրյալ չվճարված վարձավճարի արժեքը:

Արդյունքում՝ Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 614-րդ հոդվածի 3-րդ մասին և 626-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունն առ այն, որ դատավարության կողմերի միջև կնքված և միմյանց նկատմամբ պարտավորության չափի որոշման համար փորձաքննություն նշանակելու պայման ունեցող պայմանագրով կարգավորվող պարտավորությանն առնչվող դատական վեճի քննությամբ վարձակալության պայմանագրի վարձավճարից չի նվազեցվել վարձակալի կողմից կատարված բարելավումների արժեքը՝ այն ուղղակիորեն պայմանագրով նախատեսված լինելու պայմաններում, համաչափ չէ հետապնդվող նպատակին և չի համապատասխանում Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով նախատեսված՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքներին, ինչպես նաև Սահմանադրության 75-րդ հոդվածին:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված* ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,*** *ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական վերոհիշյալ դրույթն ամրագրվել է նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով, որը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը****, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «*(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության***

հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Միաժամանակ Սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում վկայակոչել Սահմանադրական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 16-ի ՍԴԱՈ-104 աշխատակարգային որոշմամբ արտահայտած հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(…) իրավական նորմերի կիրառման իրավաչափության հարցերը, ըստ էության, դուրս են Սահմանադրական դատարանի քննության առարկայական սահմաններից, քանի որ դրանք վերաբերում են իրավակիրառ գործունեության օրինականության վերահսկմանը: Սահմանադրական դատարանի իրավասությունը ծագում է միայն այն դեպքում, երբ վիճարկման առարկան նորմն է, դրա սահմանադրաիրավական բովանդակությունը կամ իրավակիրառ պրակտիկայում նորմին հաղորդված այնպիսի իմաստը/մեկնաբանությունը, որը կարող է հակասել սահմանադրական արժեբանությանը: Հենց այս տարբերակման միջոցով է ապահովվում սահմանադրական արդարադատության և սովորական դատական վերահսկողության գործառութային տարանջատումը, ինչպես նաև պահպանվում է Սահմանադրական դատարանի՝ որպես սահմանադրականության երաշխավորի առանձնահատուկ տեղն իրավական համակարգում»:*

Այս առումով Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման, այլ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի (սույն պարագայում՝ դրույթների, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատման հարցեր**:

Քննարկվող համատեքստում հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանի դատական

կազմը գտնում է, որ վերջինս բարձրացրել է այնպիսի հարցեր, որոնք **ենթակա չեն Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով Դիմողը, **ձևականորեն վիճարկելով** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասի, 614-րդ հոդվածի 3-րդ մասի և 626-րդ հոդվածի 2-րդ մասի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) **սահմանադրականությունը**, **ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթների կիրառման իրավաչափության հարց:**

Այսպես՝ Դիմողն իր անհատական դիմումով, ի թիվս այլնի, ներկայացրել է դիրքորոշում, համաձայն որի՝ «*(…) անհրաժեշտ է (…) դատավարության կողմերի միջև կնքված և միմյանց նկատմամբ պարտավորության չափի որոշման համար փորձաքննություն նշանակելու պայման ունեցող պայմանագրով կարգավորվող պարտավորությանն առնչվող դատական վեճերի ժամանակ հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբը հաշվարկել ոչ թե պարտավորության ծագման, այլ փորձաքննության եզրակացության ստացման պահից:*

Մինչդեռ դատարանը, քննելով Պատասխանողի կողմից ներկայացված հայցային վաղեմության ժամկետ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը, բավարարել է այն և մերժել Հայցվորի պահանջը՝ նման ժամկետի ընթացքը սկսված համարելով պարտավորության առաջացման պահից: (…)»:

Դիմողը նաև նշել է, որ *«(…) Դատարանը անկախ սկզբնական Հայցվորի կողմից ներկայացված պահանջից, գտնում եմ, որ պետք է հաշվանցեր վարձակալված գույքերի նկատմամբ կատարված բարելավումների արժեքը, գործի քննության ընթացքում ձեռք բերված բոլոր եզրակացությունները դատարանի կողմից գնահատվել են ոչ արժանահավատ և ոչ լրիվ: (…)»*:

Միաժամանակ Դիմողը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ***«Նման պայմաններում Դատարանը պարտավոր էր նշանակել կրկնակի և/կամ լրացուցիչ փորձաքննություն և իրավունք չուներ այն հարցերի վերաբերյալ, որոնք Դատարանի դիտարկմամբ փորձագետի կողմից պատասխան չեն տրվել, դրա անբարենպաստ հետևանքները թողնել Հայցվորի վրա և դրանց մասին***

վկայակոչել բացառապես վճռահատության փուլում, քանի որ Դատարանի համար նման պայմաններում լրացուցիչ և/կամ կրկնակի փորձաքննություն նշանակելը հանդիսացել է ոչ թե իրավունք, այլ՝ պարտականություն, ինչին ևս պատշաճ կարգով գնահատական չի տրվել» (ընդգծումը՝ Դիմողի):

Վերոշարադրյալի հաշվառմամբ նկատի ունենալով նաև Դիմողի կողմից դիմումում ներկայացված մյուս դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ վերջինս **իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ԼԴ1/1298/02/16 քաղաքացիական գործով ՀՀ դատարանների կայացրած դատական ակտերի բովանդակության առնչությամբ:** Մասնավորապես՝ Դիմողը վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասի, 614-րդ հոդվածի 3-րդ մասի և 626-րդ հոդվածի 2-րդ մասի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) **հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում,** իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են խնդրո առարկա քաղաքացիական գործով **ՀՀ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն դիմումով Դիմողի բարձրացրած հարցերի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատում, այլ ՀՀ դատարանների կայացրած դատական ակտերի իրավաչափության ստուգում, ինչը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Հետևաբար՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման՝** Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ **դիմումում առաջադրված հարցերի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Վ. Վարդանյան

Անդամներ՝ Ա. Վաղարշյան

Հ. Հովակիմյան

5 նոյեմբերի 2026 թվականի
ՍԴԴԿՈ-98